HSBC

## Կարևոր ծանուցում անհատներին, այդ թվում անհատ ձեռնարկատերերին մատուցվող ծառայությունների Հիմնական պայմանների փոփոխության վերաբերյալ

Հարգելի Հաճախորդ,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) փոփոխություններ է կատարել Հաճախորդների բանկային հաշիվների, բանկային ավանդների, էլեկտրոնային բանկային ծառայությունների և բանկային այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններում (ֆիզիկական անձանց, այդ թվում անհատ ձեռնարկատերերի համար) (այսուհետ՝ Հիմնական պայմաններ)։

Մասնավորապես կատարվել են փոփոխություններ Հիմնական պայմանների հետևյալ կետերում.

**1.** «Ընդհանուր դրույթներ» բաժնի 15-րդ կետում կատարվել է լրացում, ըստ որի Հաճախորդը պարտավորվում է Բանկի կողմից պահանջվող տեղեկությունները տրամադրել Բանկի կողմից պահանջվող ձևով, անհրաժեշտության դեպքում համապատասխան հաստատմամբ/վավերացմամբ և տրամադրված տեղեկություններում փոփոխություններ կատարվելու դեպքում անհապաղ տեղյակ պահել Բանկին՝ այդ կապակցությամբ ներկայացնելով համապատասխան փաստաթղթերը։

**2.** «Ընդհանուր դրույթներ» բաժնի 17-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, որում այժմ հղում է արվում նաև Բանկի փողերի լվացման դեմ պայքարի և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման, ինչպես նաև միջազգային պատժամիջոցների հիման վրա ընդունված ներքին իրավական ակտերին։

**3.** «Ընդհանուր դրույթներ» բաժնում ավելացվել է նոր 18-րդ կետը, որը սահմանում է Հաճախորդի կողմից գործարքի կատարման, Հաճախորդի հետ հարաբերությունների հաստատման մերժման, ինչպես նաև առկա հարաբերությունների դադարեցման Բանկի իրավասությունը՝ ՀՀ օրենսդրության և/կամ Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն։ Համապատասխանաբար կատարվել է նշված բաժնի այլ կետերի վերահամարակալում։

**4.** «Բանկային հաշիվ» բաժնի 2-րդ կետն ուժը կորցրած է ճանաչվել և համապատասխանաբար կատարվել է նշված բաժնի այլ կետերի վերահամարակալում։

## Important notice on changes in General Terms and Conditions for individuals, including sole entrepreneurs

Dear Customer,

Please be advised that HSBC Bank Armenia cjsc (hereafter the Bank) has amended the General Terms and Conditions for the Operation of Customer Bank Accounts, Bank Deposits, Electronic Banking and Other Banking Services for individuals, including sole entrepreneurs (hereafter General terms and conditions).

In particular, the following clauses of General terms and conditions have been amended:

**1.** "General Provisions" section, clause 15 has been amended with a provision, according to which the Customer shall be obliged to provide the information requested by the Bank in the format required by the latter, if necessary with appropriate approval/certification, as well as immediately notify the Bank on any changes in provided information by providing relevant documents to the Bank in that respect.

**2.** "General Provisions" section, clause 17 has been stipulated in new edition, where a reference is made to Bank's internal legal acts for combating money laundering and terrorism financing, as well as internal legal acts approved in accordance with requirements of international sanctions.

**3.** "General Provisions" section, new clause 18 has been added, which stipulates the Bank's right to reject the processing of the transaction of the Customer or the establishment of business relationships or terminate the existing relationships with the Customer pursuant to the RA legislation and/or the Bank's internal legal acts. Respectively other clauses in that section have been renumbered.

**4.** "Bank account" section, clause 2 is removed from General terms and conditions and respectively other clauses in that section have been renumbered.

HSBC

**5.** «Բանկային հաշիվ» բաժնի փոփոխված 7-րդ կետում կատարվել է լրացում, ըստ որի Հաճախորդի կողմից բանկային հաշվով տասներկու ամիս անընդմեջ որևէ գործարք չկատարելու դեպքում Հաճախորդի բանկային հաշվի սպասարկման անվտանգությունն ապահովելու նպատակով Բանկն իրավունք ունի արգելափակել Հաճախորդի բանկային հաշիվը և կասեցնել այդ հաշվով գործարքների կատարումը՝ մինչև Բանկի կողմից պահանջվող տեղեկությունները Հաճախորդի կողմից Բանկին ներկայացնելը: Ընդ որում Հաճախորդը պահանջվող տեղեկությունները Բանկին պետք է ներկայացնի անձամբ (առանց որևէ լիազորված անձի մասնակցության), հակառակ դեպքում Բանկը կմերժի վերոհիշյալ տեղեկությունների ընդունումը:

**5.** An addition is made in amended clause 7 of "Bank account" section, according to which if the Customer has not performed any transaction by his/her bank account within uninterrupted twelve months, for the purpose of ensuring the security of the Customer's bank account service, the Bank shall be entitled to block the Customer's bank account and suspend performance of transactions by that account until the Customer provides to the Bank the information required by the latter. The required information must be provided to the Bank personally by the Customer (without participation of any authorized person), otherwise the Bank shall reject to accept the above-mentioned information.

**6.** «Բանկային հաշիվ» բաժնի 21-րդ կետում կատարվել է լրացում, ըստ որի Հաճախորդը համաձայն է և հանձնարարում է Բանկին՝ իր կողմից նշված փոստային հասցեով ուղարկվող տեղեկատվությունը իր բացակայության ընթացքում տրամադրել այդ հասցեում երրորդ անձանց և պարտավորվում է այդ կապակցությամբ Բանկին որևէ պահանջ չներկայացնել:

**6.** "Bank account" section, clause 21 has been amended with a new provision, according to which if the Customer is not available at the address mentioned by himself/herself, the Customer herewith agrees and instructs the Bank to pass the information sent to that address via post mail to third parties at that address and also undertakes not to make claims against the Bank in this regard.

**7.** «Էլեկտրոնային բանկային ծառայություններ» բաժինը շարադրվել է նոր խմբագրությամբ:

**7.** The section "Electronic banking services" has been stipulated in new edition.

*Հիմնական պայմաններում կատարվել են նաև մի շարք այլ փոփոխություններ: Մանրամասների համար այցելեք **www.hsbc.am**, զանգահարեք **+374 60 655 000** հեռախոսահամարով կամ այցելեք Բանկի ցանկացած մասնաճյուղ:*

*There have also been made certain other amendments. For full details please visit **www.hsbc.am**, call us at **+ 374 60 655 000** or visit any of our branches.*

**Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2016 թ. հունիսի 15-ից:**

**The changes are in force from 15 June, 2016.**

Հարգանքով՝
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ

Sincerely,
HSBC Bank Armenia csjc

***Note:** In case of discrepancies between the Armenian and English versions of this document, the Armenian version shall prevail.*